



**ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՒՅԹԸ
ՎԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԱՏԱԽԱՁԻ ՈՒ ՔՆՆԻՉԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՊՐԵՎԼՅՈՒԶԻՎ ԵՎ ԿՈՆՎԼՅՈՒԶԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ 
Հայ-ռուսական համալսարան
ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Աշխատանքը նվիրված է մինչդասական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին դատախազի ու քննիչի որոշումների ներձյուղային և քաղաքացիական դատավարության շրջանակում միջ-ձյուղային ազդեցությունների, ինչպես նաև քրեական վարույթի նյութերի քաղաքացիական գործում որպես ապացույց օգտագործվելու հետ կապված հարցերի վերլուծությանը:

* **Արթուր Ղամբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Артур Гамбарян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления Республики Армения, заслуженный юрист РА

Artur Ghambaryan – Doctor of Juridical Sciences, Professor, Head of the Chair of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Professor of Public Administration Academy of the Republic of Armenia, Honored Lawyer of the Republic of Armenia

Էլ. փոստ՝ artur.ghambaryan@gmail.com ORCID ID: <https://orcid.org/0000-0002-6322-4664>

** **Տիգրան Մարկոսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի իրավաբանական կլինիկայի դասախոս-կոորդինատոր, Մասնկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, Սրբակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ

Тигран Маркосян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса юридического факультета ЕГУ, преподаватель-координатор юридической клиники юридического факультета ЕГУ, член Квалификационной комиссии управляющих по делам о банкротстве, член Комиссии по защите конкуренции и интересов потребителей РА,

Tigran Markosyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Civil Procedure, Lecturer-Coordinator at the Legal Clinic, Member of the Commission for the Qualification of the Bankruptcy Managers, Member of the Competition and Consumer Protection Commission of the RA

Էլ. փոստ՝ tigranmarkosyan@ysu.am ORCID ID: <https://orcid.org/0000-0002-4671-1663>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 24.05.2026

Գրախոսվել է՝ 27.05.2026

Հաստատվել է՝ 02.06.2026

© The Author(s) 2026

Տեսական աղբյուրների, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի հիման վրա աշխատանքում ուսումնասիրվել է «preclusive effect», «conclusive effect», «res judicata» և «non bis in idem» հասկացությունների փոխհարաբերությունը, բացահայտվել են քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումների արգելափակող ազդեցությունը, ինչպես նաև փաստվել է դրանց կոնկլյուզիվ ազդեցության բացակայությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում:

Առանձնահատուկ քննարկման առարկա են դարձել հիշյալ որոշումների, ինչպես նաև քրեական վարույթի այլ նյութերի՝ քաղաքացիական դատավարությունում որպես ապացույց օգտագործվելու հնարավորությունը և ապացուցողական պիտանիության սահմանները:

Կատարված հետազոտության հիման վրա հեղինակները ներկայացրել են գիտագործնական մի շարք եզրահանգումներ, որոնք կարող են ուղենիշային լինել քրեական և քաղաքացիական դատավարությունների փոխազդեցության սահմանների հստակեցման, քրեական վարույթի նյութերի ապացուցողական նշանակության սահմանների հատկորոշման և դատական պրակտիկայի հետագա զարգացման համար:

Բանալի բառեր – *քրեական հետապնդման դադարեցում, քրեական վարույթի կարճում, preclusive effect, conclusive effect, կոնկլյուզիվ, non bis in idem, res judicata, նախադատելիություն, հզոր ապացուցողական արժեք, ապացույցի պիտանիություն*

1. Ընդհանուր դրույթներ

Քրեական հետապնդումը բացառող հանգամանքների անտեսմամբ մինչդատական վարույթի իրականացումը անխուսափելիորեն կասկածի տակ է դնում ողջ քրեական վարույթի իրավաչափությունը, այդ թվում՝ մեղադրանքի օրինականությունը:

Այս հանգամանքը պարտադիր է դարձնում մինչդատական վարույթում քրեական հետապնդման դադարեցման և քրեական գործի վարույթի կարճման ինստիտուտների կիրառումը, որոնց նպատակը նախևառաջ հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի հիմնական, ներառյալ՝ արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի և կրկին չդատվելու իրավունքների իրականացման դատավարական երաշխիքներ ամրագրելն է, ինչպես նաև քրեական վարույթի իրականացման արդյունավետ կազմակերպական կառուցակարգ և ընթացակարգ սահմանելն է¹⁰:

Մյուս կողմից, սակայն, պետությունը՝ ի դեմս օրենսդիր մարմնի, քրեական վարույթի՝ եզրափակիչ դատական ակտի (սույն պարագայում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի) կայացմամբ չհանգուցալուծվելու դեպքում չի կարող հրաժարվել տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը երաշխավորելուց, նրանց արդարադատության

¹⁰ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշումը:

մատչելիությունն ու պատճառված վնասի փոխհատուցումն ապահովելուց՝ նրանց իրավունքների իրացման համարժեք դատավարական երաշխիքների տրամադրմամբ¹¹:

Կարևոր է նաև ընդգծել, որ գործնականում այդ որոշումները քաղաքացիական գործ քննող դատարանները հետազոտում են որպես ապացույց և դրանց հիման վրա պարզում գործի լուծման հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Նման պայմաններում մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհարուցելու) և քրեական վարույթը կարճելու մասին որոշումների ազդեցության բնույթը և տեսակները բացահայտելու, դրանց ներձյուղային և միջձյուղային ազդեցությունը հատկորոշելու, ինչպես նաև այդ որոշումների ապացուցողական նշանակության կամ պիտանիության սահմանները ուրվագծելու անհրաժեշտությունը ունի տեսագործնական մեծ կարևորություն:

2. Հիմնական հասկացությունները

Մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական հետապնդում չհարուցելու) և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները ունեն որոշակի ազդեցություն, որը բացահայտելու համար ելակետային է կրկին դատվելու անթույլատրելիության «non bis in idem») սկզբունքը և «res judicata» դոկտրինը¹²:

Տարբեր իրավական համակարգերում այդ ազդեցությունը բնութագրելու համար գործածվում են տարբեր հասկացություններ, ինչպիսիք են պրեկլյուզիվ՝ արգելափակող (preclusive effect, claim preclusion), և կոնկլյուզիվ՝ անվիճարկելիության (conclusive effect, issue preclusion), ազդեցությունները:

Այս տերմինների ընտրությունը կախված է տվյալ իրավական համակարգի ավանդույթներից: Այսպես՝ անգլոսաքսոնական իրավական ավանդույթներ ունեցող համակարգերում օգտագործվում է «claim preclusion» և «issue preclusion» հասկացությունները: «Claim preclusion» նշանակում է, որ եթե դատավարության ընթացքում գործը լուծվել է, ապա նույն գործի վերաբերյալ պահանջը կրկին քննարկելու հնարավորությունը բացառվում է (փակված է), իսկ «issue preclusion» նշանակում է, որ եթե դատավարության ընթացքում կոնկրետ փաստի վերաբերյալ հարցը քննարկվել է, ապա այդ հարցի կրկին քննությունը բացառվում է (փակված է): «Claim preclusion»-ի և «issue

¹¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1782 որոշումը:

¹² Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0126/13/11 քրեական գործով 2013 թվականի փետրվարի 15-ի, թիվ ԵԷԴ/0030/01/12 քրեական գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի և թիվ ՍԴ3/0080/01/12 քրեական գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումները:

preclusion»-ի հիմնական տարբերությունն այն է, որ առաջինը կոչված է բացառելու ամբողջ պահանջի կրկնակի քննարկումը, իսկ երկրորդը կոչված է բացառելու կոնկրետ փաստի վերաբերյալ հարցի կրկնակի քննարկումը¹³:

Ռոմանագերմանական իրավական համակարգերի, այդ թվում՝ Հայաստանի համար ավելի ընդունելի է ոչ թե «claim preclusion» և «issue preclusion», այլ «preclusive effect» և «conclusive effect» տերմինների գործածությունը: Բանն այն է, որ «preclusive effect» և «conclusive effect» հասկացությունները պատմականորեն ձևավորվել են լատիներեն «effectus praecusivus» և «effectus conclusivus» արտահայտությունների հիման վրա, որոնք արտացոլում են այս իրավական ընտանիքի լեզվական ժառանգությունը (օրինակ՝ ֆրանսերեն՝ *effet préclusif*, գերմաներեն՝ *Präklusionswirkung*):

Այսպիսով՝ «preclusive effect» տերմինը նկարագրում է ցանկացած եզրափակիչ դատավարական ակտի հիմնական հետևանքը՝ արգելելու կամ բացառելու վարույթի վերաբացումը (նորոգումը), իսկ «conclusive effect»-ը վերաբերում է այդ ակտով հաստատված փաստերի անվիճարկելիությունն այլ վարույթներում:

Այս երկու հասկացությունները սերտորեն առնչվում են «res judicata»-ի հետ, որը լատիներենից բառացի նշանակում է «լուծված գործ» կամ «գործ, որի վերաբերյալ կայացվել է որոշում»: Սակայն կարևոր է դրանք տարբերակել: «Res judicata»-ն ընդհանուր իրավական դոկտրին է, որն ընդգրկում է դատական ակտի երկու հիմնական ազդեցությունները՝ պահանջի բացառիկությունը (preclusive effect), որն արգելափակում է նույն գործի կրկնակի քննությունը, և փաստի պարտադիրությունը (conclusive effect), որը վարույթով հաստատված փաստերը մեկ այլ պահանջով հարուցված նոր վարույթում դարձնում է անվիճարկելի¹⁴: Մյուս կողմից՝ «res judicata»-ն առավելապես վերաբերում է դատարանի վերջնական ակտերին, իսկ «preclusive effect» հասկացությունն օգտագործվում է ավելի լայն իմաստով. այն նկարագրում է ոչ միայն դատական ակտերի, այլև ցանկացած իրավական ակտի, օրինակ՝ քննչական մարմինների և դատախազության որոշումների արգելափակող ազդեցությունը:

«Conclusive effect» հասկացությանը զուգահեռ օգտագործվում է նաև «նախադատելիություն» տերմինը¹⁵, որոնց փոխհարաբերությունը բավականին

¹³ Տե՛ս **Michelle S. Simon**. Offensive Issue Preclusion in the Criminal Context: Two Steps Foward, One Step Back Mem. L. Rev. 753 (2004), <http://digitalcommons.pace.edu/lawfaculty/212/>

¹⁴ Տե՛ս **Сибилева Ю.Е.** О современных научных подходах к понятию преюдиции // Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России, էջ 113:

¹⁵ «Նախադատելի» տերմինինը ծագում է լատիներեն «praejudicium» բառից, որը «նշանակում է հարցի նախապես լուծված լինելը կամ նախապես կայացրած որոշումը» (տե՛ս, օրինակ, **Щерба С.П., Чашина И.В.** Преюдиция в уголовном процессе России и зарубежных стран. М.: Юрлитинформ. 2013. էջ 6, **Чашина И.В.** Преюдиции в уголовном процессе: понятие и значение // Вестник Университета прокуратуры Российской Федерации, 2009, էջ 64-65:

նրբերանգային է: Եթե նախադատելիությունը դիտարկենք իր դասական իմաստով՝ որպես նախորդ դատական ակտով հաստատված փաստերի պարտադիրություն հետագա դատական վարույթների համար, ապա այն որոշակի առումով համընկնում է «conclusive effect» հասկացության հետ, քանի որ երկուսն էլ ենթադրում են, որ որոշակի փաստեր այլևս չեն կարող վիճարկվել: Դրանք կարող են տարբերվել կիրառման շրջանակով:

Այսպիսով՝ դատավարական ակտի արգելափակող ազդեցությունը («preclusive effect») ըստ էության այդ ակտով վերջնականապես լուծված իրավական պահանջի կամ գործի քննությունը նույն հիմքերով նորից սկսելու անհնարինության մասին է, որը, հայ իրավաբանական տերմինաբանությամբ, դատական ակտերի մասով կարելի է անվանել դատական ակտի բացառիկություն, իսկ դատավարական ակտի անվիճարկելիության ազդեցությունը («conclusive effect») ըստ էության այդ ակտով հաստատված փաստերը մեկ այլ դատավարությունում այն կրկին ապացուցելու պարտականությունից ազատելու մասին է, որը, հայ իրավաբանական տերմինաբանությամբ, կարելի է անվանել փաստի նախադատելիություն¹⁶:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ քննարկվող իրավիճակում առավել կիրառելի են թվում «preclusive effect» և «conclusive effect» հասկացությունները:

3. Քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին դատախազի ու քննիչի որոշումների պրեկյուզիվ ազդեցությունը

Քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու մասին որոշումները քրեական դատավարությունում ունեն արգելափակող ազդեցություն (preclusive effect), սակայն տարբեր են այս երկու որոշումների պրեկյուզիվ ազդեցության բնույթը և նորմատիվ իրավական հիմքերը:

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումն in personam ակտ է, որը, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի¹⁷ 196-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն, օրինական ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից:

Օրինական ուժի մեջ մտնելու պահից քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը ունենում է պրեկյուզիվ ազդեցություն, որն անմիջականորեն բխում է կրկին դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքից: ՀՀ ՔրԴՕ 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին

¹⁶ Քաղաքացիական գործերով դատական ակտերի բացառիկության և նախադատելիության մասին առավել մանրամասն տե՛ս Մեղրյան Ս. ԳՊ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում/ Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջ 149-153:

¹⁷ Ընդունվել է 30.06.2021 թ. : Ուժի մեջ է մտել 01.07.2022 թ. : Տե՛ս Միասնական կայք 2021.07.26-2021.08.08: Այսուհետ՝ ՀՀ ՔրԴՕ:

օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը բացառում է քրեական հետապնդումը նորոգելը»¹⁸:

Այս որոշման պրեկլյուզիվ ազդեցության հիմքը կրկին դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքն է, քանի որ այս որոշման պրեկլյուզիվ ազդեցության հիմքում ընկած է ոչ թե ձևական գործընթացի ավարտը, այլ պետության կողմից անձի նկատմամբ մեղադրական պահանջի վերջնական հրաժարումը կամ դրա անհնարինության արձանագրումը: Կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքն արտահայտում է այն գաղափարը, որ պետությունը, իր հանրային քրեական հետապնդման մենաշնորհն իրականացնելով, չի կարող անորոշ թվով անգամներ փորձել ապացուցել անձի առնչությունը դեպքին՝ դրանով իսկ խախտելով նախկինում հետապնդված անձի կարգավիճակի կայունությունը և իրավական անվտանգությունը: Երբ դատախազն օրինական ուժի մեջ մտած որոշմամբ արձանագրում է, որ տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվում է, դա նշանակում է, որ պետությունը սպառել է իր իրավասությունը տվյալ անձի նկատմամբ՝ կապված կոնկրետ արարքի հետ:

Հիշյալ մոտեցումը իր ամրագրումն է ստացել նաև Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների շրջանակում: Այսպես, ըստ Վճռաբեկ դատարանի՝ «Կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է անձի և պետության միջև որոշակի արարքի կապակցությամբ ծագած քրեական և քրեադատավարական իրավահարաբերությունների վերջնական դադարում: Ընդ որում, քրեադատավարական տեսանկյունից այն հիմնվում է քրեական հետապնդման սպառնալիքի ավարտված լինելու գաղափարի վրա: Այլ խոսքով՝ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է, որ բացակայում է հանցավոր արարքը, քանի որ քրեական մեղադրանքի բովանդակությունը կազմող արարքի կապակցությամբ անձի և պետության միջև համապատասխան իրավահարաբերությունները ծագել և վերջնականապես դադարել են, այսինքն՝ իրավական առումով «հանցավոր արարք» գոյություն չունի»¹⁹:

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման արգելափակող ազդեցությունը դրսևորվում է հետևյալ կերպ՝

- 1) այն արգելում է նույն անձի նկատմամբ,
- 2) նույն արարքի (մեղադրանքի) համար,
- 3) պաշտոնական քրեական հետապնդումը հարուցելը կամ պաշտոնական քրեական հետապնդումը վերսկսելը:

¹⁸ Այս կանոնից բացառություն է մասնավոր կարգով քրեական հետապնդում հարուցելը: ՀՀ ՔրԴՕ 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային քրեական հետապնդում չհարուցելը կամ դադարեցնելն արգելք չէ մասնավոր քրեական հետապնդում հարուցելու համար:

¹⁹ Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ՄԴ3/0080/01/12 քրեական գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշումը:

Կարևոր է ընդգծել, որ non bis in idem սկզբունքն իր տեքստուալ ձևակերպմամբ կապվում է հենց քրեական հետապնդումը դադարեցնելու հետ, այլ ոչ թե քրեական վարույթը կարճելու: Սա վկայում է այն մասին, որ օրենսդիրը տարանջատում է անձին ուղղված մեղադրանքից հրաժարվելու (հետապնդման դադարեցման) և բուն գործընթացի ավարտի (վարույթի կարճման) իրավական հետևանքները:

Քրեական վարույթը կարճելը, ի տարբերություն քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը եզրափակող կամ ավարտող ակտ է: Այն կարող է կայացվել ինչպես քրեական հետապնդման ենթակա անձի բացակայության, այնպես էլ կոնկրետ անձանց առկայության դեպքում՝ կախված քրեական վարույթը կարճելու հիմքից:

Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը ևս ունի պրեկյուզիվ ազդեցություն, այսինքն՝ վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած և չվերացված որոշումն արգելափակում է վարույթը նորոգելը կամ նույն դեպքի կապակցությամբ նոր քրեական վարույթ նախաձեռնելը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել երկու կարևոր առանձնահատկություն:

Առաջին՝ ի տարբերություն քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման, վարույթը կարճելու մասին որոշման արգելափակող ազդեցության մասին ուղղակի նորմ օրենքով նախատեսված չէ: ՀՀ ՔրԴՕ-ում բացակայում է այնպիսի դրույթ, ինչպիսին, օրինակ, ՀՀ ՔրԴՕ 25-րդ հոդվածի 2-րդ մասն է, որն էքսպլիցիտ կերպով կսահմաներ, որ վարույթը կարճելու մասին որոշման առկայությունը բացառում է նոր վարույթ նախաձեռնելը:

Երկրորդ՝ չնայած ուղիղ օրենսդրական նորմի բացակայությանը, վարույթը կարճելու մասին որոշման արգելափակող ազդեցությունը բխում է մի քանի իրավական աղբյուրներից.

1) Դատավարության վերջնականության («finis litis») ընդհանուր իրավական սկզբունքից, ըստ որի՝ օրինական կարգով ավարտված վարույթն ու նրա եզրափակիչ ակտը չպետք է ենթարկվեն անվերջ վերանայման: Դա անհրաժեշտ է իրավական կայունության, իրավունքի գերակայության և վարույթի մասնակիցների իրավական անվտանգության ապահովման համար:

2) ՀՀ ՔրԴՕ 207-րդ հոդվածի 12-րդ մասի իմպլիցիտ տրամաբանությունից, որտեղ նշված է, որ քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը վերադաս դատախազի կողմից վերացնելու դեպքում վարույթը նորոգվում է: Այս դրույթից բխում է, որ, քանի դեռ այդ որոշումը գործում է և չի վերացվել, այն արգելափակում է վարույթի նորոգումը կամ դրա կրկնությունը:

Այսպիսով, թեև քրեական վարույթը կարճելու մասին որոշման արգելափակող ազդեցությունն ուղղակիորեն ամրագրված չէ օրենքում, այն բխում է իրավական համակարգի ընդհանուր սկզբունքներից և օրենքի առանձին դրույթների փոխկապակցվածությունից:

Կարևոր է ընդգծել, որ ինչպես քրեական հետապնդումը դադարեցնելու, այնպես էլ քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պրեկլյուզիվ ազդեցությունը ներձյուղային է (intra-branch effect): Հետևաբար՝ դատախազի կամ քննիչի որոշումներն արգելափակում են նույն դեպքում քրեական հետապնդման նորոգումը կամ նոր քրեական վարույթի նախաձեռնումը:

Այս որոշումների պրեկլյուզիվ ազդեցությունը միջձյուղային (interbranch effect) բնույթ չի կրում. այն չի տարածվում իրավունքի այլ ճյուղերի, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության վրա, քանի որ

1. մինչդատական վարույթում գույքային հայց չի կարող ներկայացվել, որպիսի պարագայում ինքնին բացառվում է այդ հարցի քննարկման և դրա առնչությամբ պետաիշխանական որևէ եզրահանգման նույնիսկ տեսական հնարավորությունը.

2. քրեական վարույթի կարճումն ինքնին հիմք չէ անձի մեղավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության առումով բացառելու համար, քանի որ պատասխանատվության երկու տեսակները կարող են կիրառվել ինչպես միասին, այնպես էլ առանձին: Ավելին, արարքում հանցակազմի բացակայությունը վկայում է ընդամենը արարքի քրեականացնող հատկանիշի բացակայության մասին, մինչդեռ չի բացառում տվյալ արարքում անձի մեղավոր վարքագծի դրսևորումը և որպես վերջինիս հետևանք՝ քաղաքացիական պատասխանատվությունը²⁰.

3. ՀՀ ՔրԴՕ 160-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված է, որ քրեական գործը դատարան հանձնելուց հետո՝ մինչև նախնական դատալուսման ավարտը, գույքային հայց չհարուցելու դեպքում անձն իրավունք ունի այդպիսի հայց հարուցելու քաղաքացիական դատավարության կարգով: Հետևաբար՝ քրեական թե քաղաքացիական դատավարության կարգով գույքային հայց հարուցելու հարցի որոշումը բացառապես տուժողի հայեցողության տիրույթում է.

4. միակ դեպքը, երբ օրենսդիրը էքսպլիցիտ կերպով բացառել է քաղաքացիական դատավարության կարգով հայցի հարուցումը, սահմանված է ՀՀ ՔրԴՕ 162-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ գույքային հայցը մերժելու, լրիվ կամ մասնակի բավարարելու մասին՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բացառում է նույն անձանց միջև նույն առարկայի մասին հայցի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Վերոնշյալից բխում է, որ մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պրեկլյուզիվ ազդեցությունը սահմանափակվում է քրեական դատավարության շրջանակներով և չի խոչընդոտում քրեական հետապնդման առարկան կազմող հանցավոր արարքին առնչվող գույքային հարցերի քննարկումը քաղաքացիական դատավարությունում:

²⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/1097/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի մարտի 23-ի որոշումը:

4. Քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին դատախազի ու քննիչի որոշումների կոնկլյուզիվ ազդեցության բացակայությունը

Ակտի կոնկլյուզիվ ազդեցությունը (conclusive effect) նշանակում է, որ օրինական ուժի մեջ մտած դատավարական ակտով հաստատված փաստերը (արարքներ, հանգամանքներ) այլ իրավական գործընթացներում դառնում են անվիճարկելի և պարտադիր:

Այն, ինչպես նշվեց, բնորոշվում է նաև «նախադատելիություն» եզրույթով, որը պայմանավորում է նույն անձանց միջև այլ գործի քննության արդյունքում նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված հանգամանքներին:

Այս ինստիտուտը դատավարական իրավունքի տարբեր ճյուղերի կոնվերգենցիայի համատեքստում զբաղեցնում է հատուկ տեղ, քանի որ դրանց փոխազդեցության ակնհայտ օրինակ է²¹: Ընդ որում, նախադատելիության հատկանիշով օժտված ակտերի շրջանակի մասով երբեմն մասնագիտական գրականության մեջ հանդիպում է այն ընդլայնելու փորձեր՝ դատական ակտերի հետ նախադատելի համարելով նաև քրեական վարույթը կարճելու որոշումները²² և վարչական ակտերը²³:

Այնուհանդերձ, նման մոտեցումը հազիվ թե ընդունելի լինի, քանի որ նախադատելիության հիմքը երկու վարույթներում առնվազն համարժեք դատավարական երաշխիքների առկայությամբ ապացուցողական գործընթացի իրականացումն է: Այլ խոսքով՝ որպեսզի նախադատելիությունը՝ որպես «դատավարական հավասարում», լուծվի առանց սխալների, անհրաժեշտ է, որ նույն կանոնները պահպանված լինեն նաև նախկինում²⁴:

Հետևում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին քրեական վարույթի հանրային մասնակիցների որոշումները չունեն և չպետք է ունենան նախադատելիության (conclusive) ուժ՝ այդ գաղափարին ի բնե հակասելու ուժով:

Ասվածը ամրապնդվում է նաև Ղազախստանի օրինակով, որտեղ, թեկուզև ՔրԴՕ 127–րդ հոդվածի 4–րդ մասը միննույն կասկածանքով քրեական հե-

²¹ St`u **Шарипова А. Р.** Концептуальные основы межотраслевой конвергенции в судебном производстве по уголовным делам: монография. – Москва: Проспект, 2023, էջ 183:

²² St`u Досудебное производство по уголовно-процессуальному законодательству Российской Федерации и иных государств-членов СНГ: учеб. пособие / под. ред. докт. юрид. наук, проф. А.В. Гриненко. – М.: Юрлитинформ, 2019, էջ 129-130:

²³ St`u **Чащина И.В.** Преюдиции в уголовном процессе: понятие и значение // Вестник Университета прокуратуры Российской Федерации, 2009, էջ 65:

²⁴ St`u **Шарипова А. Р.** Преюдиция в механизме конвергенции процессуальных отраслей «на примере производства по уголовным делам о налоговых преступлениях» // Вестник Саратовской государственной юридической академии, 2021, էջ 163:

տապնդումը դադարեցնելու մասին որոշմանը դատավորի համար պարտադիրություն է հաղորդել, Ղազախստանի սահմանադրական դատարանը 05.07.2024 թ. № 47-НП նորմատիվ որոշման եզրափակիչ մասում նշել է, որ քրեական հետապնդման մարմնի ցանկացած որոշում, ներառյալ հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, դատարանի համար նախադատելի նշանակություն չունի, իսկ «բացառությամբ միևնույն կասկածանքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմանը» վերապահումը նշանակում է, որ եթե միևնույն անձի նկատմամբ միևնույն կասկածանքով առկա է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած և չվերացված որոշում, ապա դա արգելում է անձի նկատմամբ վարույթ իրականացնելը և անձին դատապարտելը, և դատարանը պարտավոր է վարույթը կարճել²⁵: Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանը նման որոշումների նշանակությունը սահմանափակել է բացառապես արգելափակող (preclusive) ուղղվածությամբ:

Ըստ որում, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին քրեական վարույթի հանրային մասնակիցների որոշումների conclusive ազդեցությունը բացառվում է նույնիսկ հանցակիցների վերաբերյալ անջատված վարույթների փոխազդեցությանը²⁶: Մասնավորապես, այն դեպքում, երբ հանցակիցների վերաբերյալ քրեական վարույթներն անջատվել են, մի հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ նշված հանգամանքները ներձյուղային կոնկյուզիվ ազդեցություն (intra-branch conclusive effect) չունեն մյուս հանցակցի վերաբերյալ վարույթում: Հետևաբար՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հանցակիցներից մեկի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է (օրինակ՝ մահանալու կամ ոչ ռեաբիլիտացնող այլ հիմքով), ապա այդ որոշման մեջ արված եզրահանգումները կամ նկարագրված հանգամանքներն իրավաբանորեն պարտադիր չեն մյուս հանցակցի վերաբերյալ գործը քննող դատարանի համար: Պատշաճ ապացուցման սկզբունքից բխում է, որ մի վարույթով կայացված որոշումներում առկա եզրահանգումները չեն կարող փոխարինել մեկ այլ վարույթով ապացուցման ընթացակարգին: Դատարանը պարտավոր է ինքնուրույն, պատշաճ ապացուցման ընթացակարգով քննել մեղադրանքը և գնահատել ապացույցները՝ անկախ մյուս հանցակցի վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ արված եզրահանգումներից և նշված հանգամանքներից:

Դա է պատճառը, որ օրենսդիրը քրեական վարույթի դատավարական ակտերից նախադատելիությամբ օժտել է միայն դատական ակտերին և այն էլ այլ

²⁵ <https://adilet.zan.kz/rus/docs/S2400000047>

²⁶ Տե՛ս **Ղամբարյան Ա.** Հանցակիցների մեղադրանքների փոխազդեցությունը՝ դատավարական ակտերի բացառող բնույթի (preclusion) ու նախադատելիության (praesudicium) համատեքստում // Օրինականություն, 2017, № 97, էջ 7-21:

դատավարություններում: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի²⁷ 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն: Նույնաբովանդակ դրույթ նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասում²⁸:

Հիշատակվածից հետևում է, որ

1. քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը այլ քրեական վարույթում չունի նախադատելիություն, որը պայմանավորված է քրեական դատավարությունում գործող ապացուցման կառուցակարգերով և յուրաքանչյուր քրեական վարույթի ճանաչողության սահմաններով.

2. այլ դատավարություններում նախադատելի են քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված ոչ թեցանկացած, այլ միայն կատարված արարքի «հանցագործության օբյեկտիվ կողմ» և այն կատարած անձի «հանցագործության սուբյեկտ» մասով փաստերը²⁹.

3. քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական վարույթի հանրային մասնակիցների որոշումները չունեն ո՛չ ներձյուղային (intra-branch), ո՛չ միջձյուղային (interbranch) կոնկլյուզիվ ազդեցություն:

Մյուս կողմից, սակայն, գաղտնիք չէ, որ քրեական վարույթի նյութերը, այդ թվում՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները, լայնորեն օգտագործվում են քաղաքացիական դատավարությունում:

Այդ մասին է վկայում Վճռաբեկ դատարանի մի շարք գործերով ձևավորված կայուն դիրքորոշումն այն մասին, որ.

«(...) թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես

²⁷ Ընդունվել է 09.02.2018թ. : Ուժի մեջ է մտել 09.04.2018թ. : Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208: Այսուհետ՝ ՀՀ ՔաղԴՕ:

²⁸ Ընդունվել է 05.12.2013թ. : Ուժի մեջ է մտել 07. 01. 2014թ. : Տե՛ս ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:

²⁹ Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԳԴ4/0491/02/09 և թիվ 2-3/2004 քաղաքացիական գործերով 2012 թվականի հոկտեմբերի 19-ի, թիվ ԵԱՔԴ/1747/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի ապրիլի 30-ի և թիվ ԵԱՆԴ/1788/02/12 քաղաքացիական գործով 2022 թվականի սեպտեմբերի 30-ի որոշումները:

հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը»³⁰:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը իր այս դիրքորոշումը վերահաստատել է նաև նոր ՀՀ ՔաղԴՕ ուժի մեջ մտնելուց հետո՝ հավելելով.

«(...) Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում քրեական գործում առկա փաստերը դատարանը պարտավոր է հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավաստության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ: Ընդ որում, քրեական գործերով ընդունված որոշումները, որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, կարող են գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տան դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը»³¹:

Սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է քննարկվող հարցին՝ նշելով հետևյալը.

«Ի տարբերություն դատավճռի, սակայն, որով հաստատված փաստական հանգամանքները նախադատելի են քաղաքացիական գործ քննող դատարանի համար և չեն ենթարկվում հետագա ապացուցման, դատավճռից բացի, քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը քննվում են քաղաքացիական գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ միասին:

Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումն ընդամենը չի զրկում դատարանին այդ հնարավորությունից՝ շահագրգիռ կողմի համար ապահովելով ոչ միայն քրեական վարույթի ընթացքում կայացվող այլ եզրափակիչ ակտերով հաստատվող փաստերը, այլ նաև հենց նման ակտերի կայացման

³⁰ Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԱԲԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի ապրիլի 22-ի, թիվ ԵՇԴ/0448/02/11 և թիվ ԱՎԴ1/0381/02/11 քաղաքացիական գործերով 2012 թվականի դեկտեմբերի 25-ի, թիվ ԵԱՔԴ/0132/02/11 քաղաքացիական գործով 2013 թվականի նոյեմբերի 29-ի, թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով 2014 թվականի հուլիսի 18-ի, թիվ ԵԱՔԴ/1328/02/12 քաղաքացիական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի, թիվ ԱԴԴ1/1063/02/15 քաղաքացիական գործով 2018 թվականի ապրիլի 7-ի և թիվ ՍնԴ/1294/04/21 սնանկության գործով 2024 թվականի հուլիսի 4-ի որոշումները:

³¹ Վճռաբեկ դատարանի թիվ ՍնԴ/1294/04/21 սնանկության գործով 2024 թվականի հուլիսի 04-ի որոշումը:

Վիաստը որպես ապացույց դիտարկելը՝ գործով հիմնավորված և պատճառաբանված ակտ կայացնելու համար»³²:

Մի կողմ թողնելով վկայակոչված դիրքորոշումներում «փաստ» և «ապացույց» եզրույթների սխալ կիրառման դրվագները՝ ակնհայտ է, որ դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները, ինչպես նաև քրեական վարույթի այլ նյութերը դիտարկվում են ինքնուրույն գրավոր ապացույցներ և ենթակա են հետազոտման և գնահատման քաղաքացիական գործում առկա այլ ապացույցների հետ համակցությամբ:

Այնինչ նման ընդհանրական մոտեցումը որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս, քանի որ անտեսում է դատավարագիտական մի շարք էլակետեր, ինչպես նաև հակասում ապացուցողական իրավունքի ընդհանուր տրամաբանությանը և սկզբունքներին:

Այս առումով հարկ է նախևառաջ անդրադառնալ խնդրո առարկա որոշումների քաղաքացիական դատավարությունում ապացույց հանդիսանալու հնարավորությանը և ապացուցողական նշանակության կամ պիտանիության³³ սահմաններին:

ՀՀ ՔաղԴՕ 57-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ապացույցի բնորոշումը, որի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն՝ օրենսդիրն ապացույց է համարում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունները (փաստական տվյալները)³⁴:

Ընդ որում, օրենսդիրը սպառնիչ սահմանել է ապացույցների տեսակները, որոնք կարող են օգտագործվել քաղաքացիական դատավարությունում՝ դրանց շարքին դասելով գրավոր ապացույցները, այսինքն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող անհատական կամ ներքին իրավական ակտերը, գործարքները, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը և այլ գրավոր նյութերը (փաստաթղթերը):

Ինչպես բխում է շարադրվածից, քաղաքացիական դատավարությունում անհատական իրավական ակտերը, որոնց շարքին կարելի է դասել նաև քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին *in personam*

³² Սահմանադրական դատարանի 2025 թվականի մայիսի 20-ի ՍԴՈ-1782 որոշումը:

³³ «Պիտանի ապացույց» եզրույթը օրենսդիրը կիրառել է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում:

³⁴ Տե՛ս **Մեղրյան Ս. ԳՍ** Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում // Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 14-15:

որոշումները, կարող են ապացույց համարվել, եթե պարունակում են փաստական տվյալներ: Մինչդեռ քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու մասին որոշումներում արտացոլված դատախազի կամ քննիչի ճանաչողական գործունեության արդյունքում ձևավորված եզրահանգումները և գնահատականները չեն կարող համարվել փաստական տվյալ:

Բացի այդ, այստեղ կարևոր է առանձնացնել ևս երեք հանգամանք.

1. քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պատճառաբանության փաստական հանգամանքները հաստատելու հիմքում դրվում են քրեական վարույթի նյութերը, այսինքն՝ այդ որոշումները ապացույց դիտարկելու դեպքում դրանք ունեն ածանցական բնույթ.

2. քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները գրավոր ապացույց դիտարկելու պայմաններում դրանք կարող են ծառայել ապացույցների բացասական թույլատրելիության կանոնը շրջանցելու միջոց, քանի որ նյութական իրավունքի վկաների ցուցմունքների կիրառելիության արգելքը³⁵ ձևական առումով հաղթահարված կարող է համարվել դրանք այս որոշումներում արտացոլելու, այսինքն՝ գրավոր ձև հաղորդելու փաստով.

3. քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները չեն կարող ունենալ ապացուցողականության կամ պիտանիության ավելի ընդգրկուն սահմաններ, քան նույն վարույթով լիարժեք ապացուցման գործընթացի արդյունքում ընդունված եզրափակիչ դատական ակտի ապացուցողականության սահմաններն են: Մասնավորապես, եթե քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը քաղաքացիական դատավարությունում ունի կանխորոշ ապացուցողական նշանակություն միայն հանցավոր արարքի և այն կատարող անձի մասով, ապա անթույլատրելի է մինչդատական վարույթում քրեական վարույթի հանրային մասնակիցների որոշումներին ավելի մեծ ապացուցողականության սահմաններ հաղորդելու մոտեցումը:

Հաշվի առնելով ողջ շարադրվածը՝ անվիճելի է թվում այն պնդումը, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները պատճառաբանական մասում հաստատված փաստերի մասով բովանդակային առումով չեն համապատասխանում «ապացույց» հասկացությանը:

Միննույն ժամանակ, չի կարող և չպետք է բացառվի այդ որոշումների առհասարակ որևէ ապացուցողական նշանակությունը: Խոսքը քրեական հետապնդման դադարեցման և քրեական գործի վարույթի կարճման փաստերին է վերաբերում, որոնց հաստատումը հենց այս որոշումների մենաշնորհն է:

³⁵ Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ1/0381/02/11 քաղաքացիական գործով 2012 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

Այսպես, ՀՀ ՔաղԴՕ 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով, իսկ ՀՀ ՔրԴՕ-ն հիշյալ դատավարական գործողությունների կատարումը պայմանավորում է համապատասխան որոշումների կայացմամբ: Հետևաբար, եթե անձը քաղաքացիական դատավարության կարգով պահանջի ռեաբիլիտացիա, ապա քաղաքացիական դատարանը ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու փաստն ապացուցելու համար որպես ապացույց պետք է օգտագործի քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումը:

Ընդ որում, նման դեպքերում տեղին է հիշատակել այն կարևոր գաղափարը, որ օրենսդրի տրամաբանությունը հիմնված է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափության կանխավարկածի վրա, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը³⁶:

Իրավիճակն այլ է, երբ անհրաժեշտ է քաղաքացիական դատավարությունում որպես գրավոր ապացույց օգտագործել քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու մասին որոշումների պատճառաբանության հիմքում դրված քրեադատավարական ապացույցները: Եթե քրեական վարույթում ապացույցներով հաստատվել են որոշ հանգամանքները, որոնք վերաբերելի են նաև քաղաքացիական գործով ապացուցման առարկային, ապա քաղաքացիական դատարանն այդ հանգամանքները հաստատելիս կամ հերքելիս որպես ապացույց կարող է օգտագործել քրեական վարույթում ձեռք բերված ապացույցները՝ ցուցմունքները, եզրակացությունները, որոնք համապատասխանում են «ապացույց» հասկացության բովանդակային կողմին:

Թեև ՀՀ ՔաղԴՕ-ն որևէ փաստի նախապես հաստատվածի ուժ չի տալիս՝ բացառությամբ ապացուցելուց ազատված լինելու դեպքերի, այնուամենայնիվ քրեական վարույթի նյութերը քրեադատավարական խիստ ընթացակարգերի պահպանմամբ հավաքված և հարկադիր մեխանիզմով ապահովված լինելու ուժով քաղաքացիական դատավարությունում կարող են դիտարկվել որպես հզոր (ծանրակշիռ) ապացուցողական արժեք (strong probative value) ունեցող ապացույցներ³⁷: Այս առումով տեղին է հիշատակել Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, ըստ որի. «...բացատրությունը և ցուցմունքը քաղաքացիական դատավարությունում որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ գնահատելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել դրանց ձեռքբերման՝ քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես՝

³⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի ՍԴՈ-1238 որոշումը:

³⁷ «Հզոր ապացուցողական արժեքը» ապացույցի ուժի որակական չափանիշ է, որը ցույց է տալիս, թե որքանով է տվյալ ապացույցը կարողանում հաստատել կամ հերքել հանգամանքը՝ համեմատած այլ ապացույցների հետ: Այն պատասխանում է «այս ապացույցը որքանով է համոզիչ» հարցին:

այն, որ ցուցմունքի պարագայում դրա ձեռքբերման ընթացակարգն առավել հիմնավոր երաշխիքներ է բովանդակում այդ ապացույցի արժանահավատությունն ապահովելու առումով»³⁸:

Այսպիսով, կարելի է ասել, որ քրեական վարույթի նյութերը քաղաքացիական դատավարությունում հանդես են գալիս «առաջինը հավասարների մեջ» ռեժիմով, սակայն չպետք է մոռանալ, որ այս ռեժիմը ունի միայն փաստացի (de facto) բնույթ, ոչ թե պարտադիր իրավական նորմ (de jure rule) է: Այլ կերպ ասած՝ թեև քրեադատավարական ընթացակարգերով ձեռք բերված ապացույցները քաղաքացիական դատավարությունում կարող են փաստացի ունենալ հզոր ապացուցողական արժեք, սակայն չեն վերածվում անվիճարկելիության կամ օրենսդրական պարտադրանքի, իսկ հակառակ կողմը պահպանում է դրանք վիճարկելու և հերքելու իրավունքը՝ ներկայացնելով իր փաստարկները և ապացույցները:

5. Եզրահանգումներ

Սույն հետազոտության հիման վրա կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Մինչդատական վարույթը կարճելու մասին որոշումը քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման նման ունի պրեկյուզիվ ազդեցություն, որը բխում է դատավարության վերջնականության («finis litis») ընդհանուր իրավական սկզբունքից և իմպլիցիտ ձևով ածանցվում է քրեադատավարական օրենսդրությունից:

2. Մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պրեկյուզիվ ազդեցությունը սահմանափակվում է քրեական դատավարության շրջանակներով և չի խոչընդոտում քրեական հետապնդման առարկան կազմող հանցավոր արարքին առնչվող գույքային հարցերի քննարկումը քաղաքացիական դատավարությունում:

3. Մինչդատական վարույթում քրեական վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քրեական վարույթի հանրային մասնակիցների որոշումները չունեն ո՛չ ներձյուղային (intra-branch), ո՛չ միջձյուղային (interbranch) կոնկյուզիվ ազդեցություն:

4. Մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները պատճառաբանական մասում հաստատված փաստերի մասով բովանդակային առումով չեն համապատասխանում «ապացույց» հասկացությանը և չեն կարող օգտագործվել քաղաքացիական դատավարությունում:

³⁸ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով 2014 թվականի հուլիսի 18-ի որոշումը:

5. Մինչդատական վարույթում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու մասին որոշումները քաղաքացիական դատավարությունում համապատասխանաբար կարող են օգտագործվել քրեական հետապնդման դադարեցման և քրեական վարույթը կարճելու փաստը հաստատելու կամ հերքելու համար:

6. Քրեական հետապնդման դադարեցման և քրեական վարույթը կարճելու փաստերից զատ այլ փաստերի հաստատման կամ հերքման համար այդ որոշումների քաղաքացիական դատավարությունում օգտագործումը ոչ իրավաչափորեն ընդլայնում է դրանց ապացուցողական նշանակության կամ պիտանիության սահմանները, և կարող է հանգեցնել քաղաքացիական դատավարության բացասական թույլատրելիության կանոնի շրջանցման:

7. Քրեական վարույթի այլ նյութերը որպես ապացույց կարող են օգտագործվել քաղաքացիական դատավարությունում: Ընդ որում, քրեադատավարական ընթացակարգի պահպանմամբ ստացված ապացույցները քաղաքացիական դատավարությունում կարող են ունենալ հզոր ապացուցողական արժեք և այլ ապացույցների շարքում հանդես գալ որպես «առաջինը հավասարների մեջ» ռեժիմով, որը, սակայն, չի բացառում դրանց վիճարկելիության հնարավորությունը:

АРТУР ГАМБАРЯН, ТИГРАН МАРКОСЯН – Преклюзивное и конклюдентное воздействие решений прокурора и следователя о прекращении уголовного преследования и прекращении уголовного производства в уголовном и гражданском судопроизводстве. – Настоящая работа посвящена анализу внутриотраслевого воздействия и межотраслевого воздействия в рамках гражданского судопроизводства решений прокурора и следователя о прекращении уголовного преследования и прекращении уголовного производства на досудебной стадии, а также вопросам использования материалов уголовного производства в качестве доказательств в гражданском процессе.

На основе теоретических источников, законодательства и правоприменительной практики в работе исследуется взаимосвязь понятий preclusive effect, conclusive effect, res judicata и non bis in idem. Выявляется преклюзивный характер решений о прекращении уголовного преследования и прекращении уголовного производства, а также обосновывается отсутствие их конклюдентного воздействия как в уголовном, так и в гражданском судопроизводстве.

Особое внимание уделено возможности использования указанных решений, а также иных материалов уголовного производства в качестве доказательств в гражданском процессе и пределам их доказательственной допустимости и доказательственной ценности.

На основе проведенного исследования авторами сформулирован ряд теоретических и практических выводов, которые могут служить ориентиром для уточнения границ взаимодействия уголовного и гражданского судопроизводства, определения пределов доказательственного значения материалов уголовного производства и дальнейшего развития судебной практики.

Ключевые слова: прекращение уголовного преследования, прекращение уголовного производства, preclusive effect, conclusive effect, конвергенция, non bis in idem, res judicata, преюдициальность, высокая доказательственная ценность, пригодность доказательств

ARTUR GHAMBARYAN, TIGRAN MARKOSYAN – *The Preclusive and Conclusive Effects of Prosecutor’s and Investigator’s Decisions on Termination of Criminal Prosecution and Dismissal of Criminal Proceedings in Criminal and Civil Procedures.* – This paper is devoted to the analysis of the intra-branch effects and interbranch effects within the framework of civil proceedings of prosecutors’ and investigators’ decisions on the termination of criminal prosecution and dismissal of criminal proceedings at the pre-trial stage, as well as issues related to the use of criminal case materials as evidence in civil proceedings.

Based on theoretical sources, legislation, and judicial practice, the paper examines the interrelationship between the concepts of preclusive effect, conclusive effect, *res judicata*, and *non bis in idem*. It identifies the preclusive nature of decisions on the termination of criminal prosecution and dismissal of criminal proceedings and substantiates the absence of their conclusive effect in both criminal and civil proceedings.

Particular attention is given to the possibility of using the aforementioned decisions, as well as other materials of criminal proceedings, as evidence in civil litigation and to the limits of their evidentiary admissibility and probative value.

Based on the conducted research, the authors present several theoretical and practical conclusions that may serve as guidance for clarifying the limits of interaction between criminal and civil proceedings, determining the boundaries of evidentiary value of criminal case materials, and contributing to the further development of judicial practice.

Key words: *termination of criminal prosecution, dismissal of criminal proceedings, preclusive effect, conclusive effect, convergence, non bis in idem, res judicata, prejudicial effect, strong probative value, evidentiary suitability*

References

- Hayastani Hanrapetut’yan k’reakan datavarut’yan orensirk’. Yndunvel e 30.06.2021t’., uzhi mej mtel e 01.07.2022t’.: Miasnakan kayk’ 2021.07.26-2021.08.08.
- Hayastani Hanrapetut’yan k’aghak’atsiakan datavarut’yan orensirk’. Yndunvel e 09.02.2018t’., uzhi mej mtel e 09.04.2018t’.: HHPT 2018.03.05/16(1374) Hod. 208.
- Hayastani Hanrapetut’yan vardchakan datavarut’yan orensirk’. Yndunvel e 05.12.2013t’., uzhi mej mtel e 07.01.2014t’.: HHPT 2013.12.28/73(1013).1 Hod. 1186.1.
- Sahmanadrakan datarani 2015 t’vakani dektemberi 1-i SDO-1238 voroshumy.
- Sahmanadrakan datarani 2019 t’vakani septemberi 4-i SDO-1476 voroshumy.
- Sahmanadrakan datarani 2025 t’vakani mayisi 20-i SDO-1782 voroshumy.
- Vchrrabek datarani t’iv EED/0126/13/11 k’reakan gortsov 2013 t’vakani p’etrvari 15-i voroshumy,
- Vchrrabek datarani t’iv EED/0030/01/12 k’reakan gortsov 2014 t’vakani hoktemberi 31-i voroshumy,
- Vchrrabek datarani t’iv SD3/0080/01/12 k’reakan gortsov 2014 t’vakani hoktemberi 31-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv EAND/1097/02/10 k’aghak’atsiakan gortsov 2012 t’vakani marti 23-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv GD4/0491/02/09 k’aghak’atsiakan gortsov 2012 t’vakani hoktemberi 19-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv 2-3/2004 k’aghak’atsiakan gortsov 2012 t’vakani hoktemberi 19-I voroshumy.
- Vchrrabek datarani t’iv EAQD/1747/02/12 k’aghak’atsiakan gortsov 2015 t’vakani aprili 30-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv EAND/1788/02/12 k’aghak’atsiakan gortsov 2022 t’vakani septemberi 30-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv ARAD/0093/02/09 k’aghak’atsiakan gortsov 2010 t’vakani aprili 22-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv ESHD/0448/02/11 k’aghak’atsiakan gortsov 2012 t’vakani dektemberi 25-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv AVD1/0381/02/11 k’aghak’atsiakan gortsov 2012 t’vakani dektemberi 25-i voroshumy.
- Vchrrabek datarani t’iv EAQD/0132/02/11 k’aghak’atsiakan gortsov 2013 t’vakani noyemberi 29-i voroshumy.

- Vchrrabek datarani t'iv ESHD/1342/02/11 k'aghak'atsiakan gortsov 2014 t'vakani hulisi 18-i voroshumy.
- Vchrrabek datarani t'iv EAQD/1328/02/12 k'aghak'atsiakan gortsov 2015 t'vakani noyemberi 27-i voroshumy.
- Vchrrabek datarani t'iv ARD1/1063/02/15 k'aghak'atsiakan gortsov 2018 t'vakani aprili 7-i voroshumy.
- Vchrrabek datarani t'iv SnD/1294/04/21 snankut'yan gortsov 2024 t'vakani hulisi 4-i voroshumy.
- Simon Michelle S. "Offensive Issue Preclusion in the Criminal Context: Two Steps Forward, One Step Back." *Mem. L. Rev.* 753, 2004.
- Sibileva Yu.E. "O sovremennykh nauchnykh podkhodakh k ponyatiyu preyuditsii." *Yuridicheskaya nauka i praktika: Vestnik Nizhegorodskoi akademii MVD Rossii.*
- Shcherba S.P., Chashchina I.V. *Preyuditsiya v ugolovnom protsesse Rossii i zarubezhnykh stran.* Moscow: Yurlitinform, 2013.
- Chashchina I.V. "Preyuditsii v ugolovnom protsesse: ponyatie i znachenie." *Vestnik Universiteta prokuratury Rossiiskoi Federatsii*, 2009.
- Meghryan S.G. *Arajin at'vani datarani datakan akteri iravabanakan bnuyty ev vorakakan kayunut'yan apahovman himnakhndirneri k'aghak'atsiakan datavarut'yunum.* YSU Press, Yerevan, 2020.
- Sharipova A.R. *Kontseptual'nye osnovy mezhotraslevoi konvergentsii v sudebnom proizvodstve po ugolovnym delam: monografiya.* Moscow: Prospekt, 2023.
- Dosudebnoe proizvodstvo po ugolovno-protsessual'nomu zakonodatel'stvu Rossiiskoi Federatsii i inykh gosudarstv-chlenov SNG: ucheb. posobie / pod red. A.V. Grinenko.* Moscow: Yurlitinform, 2019.
- Sharipova A.R. "Preyuditsiya v mekhanizme konvergentsii protsessual'nykh otraslei (na primere proizvodstva po ugolovnym delam o nalogovykh prestupleniyakh)." *Vestnik Saratovskoi gosudarstvennoi yuridicheskoi akademii*, 2021.
- Ghambaryan A. "Hantsakitsneri meghdrankneri p'okhazdets'ut'yuny` datavarakan akteri bats'arogh bnuyti (preclusion) u nakhadatiut'yan (praepjudicium) hamatekstum." *Orinakanut'yun*, 2017, No. 97.
- Meghryan S.G. *Apats'utsumy ev apats'uytsnery Hayastani Hanrapetut'yan k'aghak'atsiakan datavarut'yunum.* Ardaradatut'yan akademia, Yerevan, 2020.
<https://adilet.zan.kz/rus/docs/S2400000047>